ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5401-Ա « 05 » նոյեմբերի 2026թ.

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԲԱԲԿԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԱՀԱ ԵՎ ՊԼԶԵՆ ՔԱՂԱՔՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, հիմք ընդունելով, Հայաստանի Հանրապետությունում Չեխիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Պետր Պիրունչիկի հրավերը՝ քաղաքային տրանսպորտի, երթևեկության կառավարման, մասնավորապես՝ մետրոպոլիտենի ենթակառուցվածքների և դրանց արդիականացման ոլորտներում չեխական փորձին ծանոթանալու նպատակով.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բաբկեն Սեդրակյանին՝ 2026 թվականի նոյեմբերի 9-ից 13-ը ներառյալ գործուղել Չեխիայի Հանրապետության Պրահա և Պլզեն քաղաքներ:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին, բացառությամբ ավիատոմսի, որը հոգում է հրավիրող կողմը:

3. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բաբկեն Սեդրակյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել նույն փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական գծով տնօրեն Հարություն Դանիելյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ